ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Գույքի անհատույց տրամադրման հիմք է հանդիսացել ՀՀ Կոտայքի մարզպետի ս/թ մարտի 14- ի N**01 /09/01386-2022** գրությունը որով առաջարկվում է՝ որ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2021 թվականի մարտ ամսից մեկնարկած օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ընկերությունների հետներդրումային սպասարկման ծառայության շրջանակներում հետևողական աշխատանքներ է իրականացնում «էֆ էմ Դի Քեյ էլ Եվրոպա» ՍՊ Ընկերության (այսուհետ՝ վերաբրենդինգի արդյունքում «Քլինչոիս») հետ:

Ընկերությունը, հանդիսանալով «FMD K&L» համաշխարհային կորպորացիայի հայաստանյան մասնաճյուղը, գլոբալ պայմանագրային հետազոտական կազմակերպություն է, որը ԱՄՆ-ում, Եվրոպայում և Արևելյան Ասիայում (ներառյալ Չինաստան, Հոնկոնգ, Թայվան և Հարավային Կորեա) ծառայություններ է մատուցում բիոտեխնոլոգիաների ոլորտում իրենց բժշկական արտադրանքը գրանցել ցանկացող աշխարհի խոշորագույն միջազգային դեղագործական և բուժպարագաների ընկերությունների համար՝ առաջարկելով ICH GCP համատեղելի կլինիկական հետազոտական ծառայությունների ամբողջական փաթեթ:

Ընկերությունն իրականացնում է կլինիկական հետազոտություններ՝ հաստատելու նոր դեղամիջոցների անվտանգությունը հիվանդների համար: Վերջինիս գործունեությունը ներառում է դեղերի գրանցում, բժշկագրություն, կլինիկական գործառնություններ, տվյալների կառավարում, կենսաստատիստիկա, վիճակագրական ծրագրավորում և դեղազգոնության վարում:

Ընկերությունը մտադիր է հիմնել մարզային գրասենյակներ, ինչը ենթադրում է համայնքներում մեկնարկային բարձր աշխատավարձով նոր աշխատատեղերի ստեղծում ու բժշկական և բիոտեխնոլոգիական կրթությամբ երիտասարդների ներգրավում Ընկերության աշխատանքներին, ինչն էլ իր հերթին էապես կնպաստի երկրի տնտեսության համաչափ զարգացմանը և նոր ներդրումների խթանմանը:

Ծրագրի իրականացման նպատակով «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը դիմել է ՀՀ Կոտայքի մարզպետարան ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն

համայնքում «Քլինչոիս» ՍՊԸ-ի գրասենյակի՝ երկու տարի ժամկետով անհատույց տրամադրման խնդրանքով, որի լրանալուց հետո Ընկերությունը սեփական միջոցներով կվարձակալի գրասենյակային տարածքներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գագիկ Մաթևոսյան**